

9951

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ
ԷՆԵՐԵՏԻԿԱԿԱՆ
ԿԱՌԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ
ՑԵՐԻՏԱԾԱՆԻԳԱԿԱՆ
ԽՈՒՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԳԻՐՆԵ ՈՒ
ԿԱՆԴԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԿՄ

2-21

ԳԵՏԱՐԵՏ

ԵՐԱՐԱՆԻ ԿԱՌԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ
ԽՈՒՐՈՒԹՅՈՒՆ ● 1999



24 SEP 2006

Պրոլետարների բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԱՅԿԸՄ
2-20

1 DEC 2000

այր

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

Լ Ե Ն Ի Ն Յ Ա Ն

Կ Ո Մ ՈՒ Ն Ի Ս Տ Ա Կ Ա Ն

Յ Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ Ա Կ Ա Ն

Մ Ի ՈՒԹ Յ Ա Ն

ԾՐԱԳԻՐՆ ՈՒ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏՀՐԱՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ ● 1939

01 JUN 2013

9957



3502
39

ПРОГРАММА И УСТАВ
ВСЕСОЮЗНОГО ЛЕНИНСКОГО
КОММУНИСТИЧЕСКОГО
СОЮЗА МОЛОДЕЖИ

Армгиз—Издательство полит. литературы
Бреван, 1939

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ՀԱՍԼԿՅԵՄ X ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ
1936 թ. ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ

1. Ռուսաստանի պրոլետարիատը 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ, աշխատավոր գյուղացիության աջակցությամբ, կոմունիստական (բոլշևիկներին) կուսակցության և նրա հիմնադիր Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, տապալեց կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը և հաստատեց իր իշխանությունը—պրոլետարիատի դիկտատուրան:

Հեղափոխություններ առաջ ել յեղեկ են: Նրանք առաջ եյին մղում մարդկությունը, սակայն սովորաբար վերջանում եյին չահազործողների մի խմբակը չահազործողների մի այլ խմբակով փոխարինելով: «Շահազործողները փոխվում եյին, չահազործումը մնում եր» (Ստալին): Փարիզի կոմունան առաջին հեղափոխությունն եր, վորը

Նպատակ էր դրել տապալել ընդհանրապես շահագործողների տիրապետութունը: Նա պրոլետարիատի հերոսական, սակայն և այնպես անհաջող փորձն էր՝ հաստատելու իր գեղատառերան: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխութունը ԽՍՀՄ մեջ մյուս բոլոր հեղափոխութուններից տարբերվում է նրանով, վոր նա իշխանության գլուխ կանգնեցրեց բանվոր դասակարգին և վոչնչացրեց մարդու ամեն մի շահագործում մարդու կողմից: «Նա իրեն նպատակ է դնում վո՛չ քե շահագործման մի ձևը շահագործման մի այլ ձևով, շահագործողների մի խումբը շահագործողների մի այլ խմբով փոխարինելը, այլ մարդու կողմից մարդու ամեն մի շահագործում վոչնչացնելը, բոլոր և ամեն տեսակ շահագործողական խմբերը վոչնչացնելը, պրոլետարիատի դիկտատուրա հաստատելը, մինչև այժմ գոյություն ունեցած ննշված բոլոր դասակարգերից ամենահեղափոխական դասակարգի իշխանությունը հաստատելը, սոցիալիստական նոր,

անդասակարգ, հասարակություն կազմակերպելը: Հենց այդ պատճառով էլ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթությունն արմատական բեկում է նշանակում մարդկության պատմության մեջ, արմատական բեկում համաշխարհային կապիտալիզմի պատմական ճակատագրում, արմատական բեկում՝ համաշխարհային պրոլետարիատի ազատագրական շարժման մեջ, արմատական բեկում ամբողջ աշխարհի շահագործվող մասսաների պայքարի յեղանակների ու կազմակերպման ձևերի մեջ, կենցաղում ու տրադիցիաներում, կուլտուրայի ու գաղափարախոսության մեջ» (Ստալին):

2. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխութունն ընդմիջտ վոչնչացրեց ԽՍՀՄ մեջ կապիտալիստական ստրկության ու ճնշման իրավակարգը, այն իրավակարգը, վորը դեռ տիրապետում է ԽՍՀՄ սահմաններից դուրս, աշխարհի մյուս յերկրներում:

Կապիտալիզմի պայմաններում կապիտալիստների ու կալվածատերերի տիրապետող

դասակարգը կազմող մարդկանց փոքր թիվն
իր ձեռքում կենտրոնացնում և հասարակու-
թյան բոլոր հարստությունները, տիրապե-
տում և Փառքիկաներին, գործարաններին,
հողին, յերկաթուղիներին ու ապրանքներին,
մինչդեռ ազգարնակության հսկայական մե-
ծամասնությունը—սրբալուստարներն ու կի-
սապրոկտարները—գուրկ են ասրելու մի-
ջոցներից և հարկադրված են վաճառելու
իրենց աշխատանքային ուժը՝ աշխինքն՝ վար-
ձով ծառայելու կապիտալիստներին ու կալ-
վածատերերին, հարկադրված են ընդունելու
կապիտալիստական շահագործման լուծը և
իրենց աշխատանքով հարստություն ստեղ-
ծելու կապիտալիստական ստրկատերերի
համար:

Կապիտալիստական հասարակության զար-
գացմամբ, տեխնիկայի և աշխատանքի ար-
տադրողականության աճմամբ ավելանում
են այն հարստությունները, տնտեսական
ուժն ու զորությունը, վոր տնորինում են
կապիտալիստներն ու կալվածատերերը, և
միևնույն ժամանակ ավելանում և աշխատա-

վոր մասսաների և առաջին հերթին բան-
վորների ու մանր դյուղացիների տնտեսա-
կան քայքայումը, աճում են աղքատու-
թյունն ու տառապանքները: Բանվորների
հսկայական և որքստորե ավելացող մասսա-
ները, վորոնք չեն կարողանում վաճառել
իրենց աշխատանքային ուժը, կազմում են
գործազուրկների մշտական բանակը, վորը
կապիտալիստական հասարակակարգի ան-
խուսափելի ուղեկիցն և հանդիսանում:

Կապիտալիստական հասարակակարգի
սլայմաններում առանձնապես ծանր և աշ-
խատավոր կանանց ու յերիտասարդու-
թյան դրությունը: Բուրժուազիան ամեն ինչ արել
և աշխատավոր կնոջը ճորտացնելու, նրա
արժանապատվությունն ստորացնելու հա-
մար, նվաստացրել և աշխատավոր կնոջը
մինչև ստրկուհու դրությունը: Աշխատավոր
կնոջ իրավազուրկ դրությունը բուրժուա-
կան հասարակության մեջ, նրա նյութա-
կան անապահովվածությունը տանում են
դեպի սլոռնկության զարդացումը:

Անտանիլի յե աշխատավոր յերիտասար-

դուրթյան դրությունը. գործադրկուրթյունը կիսաքաղց գոյության և դատապարտում նրան. զարգանում և աղքատությունը և չըմոլիկությունը. ձեռնարկություններում աշխատող դեռահասներն ու յերիտասարդությունն անգուսպ կերպով շահագործվում են. նրանց աշխատանքի վարձատրությունը չավագանց ցածր է, աշխատանքային ուր՝ յերկարատե, աշխատանքի սլաշտպանության բացակայություն, լիակատար կախումն տիրոջ ու վարպետի քմահաճույքից, դեռահասների աշխատանք գիշերային հերթափոխություններում և առողջության համար վնասակար ցեխերում: Սոցիալական հիվանդությունները հյուծում են բանվորական, դուրդադրական ու ծառայող յերիտասարդության ֆիզիկական ուժերը և քայքայում են նրա առողջությունը: Պատանիներն ու աղջիկները զուրկ են կրթություն ստանալու հնարավորությունից, ապրում են աշխատանքից վտարվելու, սովի ու աղքատության յերկյուղի տակ: Յերիտասարդությունը կապիտալիստական հասարակության

մեջ աշխատավորության ամենախրալագուրկ մասն է:

Կապիտալիստական հասարակակարգի զարգացումը, վորտեղ տիրապետում և արտադրության անարխիան, վորտեղ յուրաքանչյուր կապիտալիստի միակ նպատակն և շահույթի հետեից ընկնել, վորտեղ կապիտալիստը, իր շահույթն ավելացնելու նպատակով, ձգտում է չնչին չափի հասցնել բանվորի աշխատավարձը, վորտեղ այդ պատճառով աշխատավոր մասսաների սպառումը սահմանափակված է բանվորի կյանքի համար անհրաժեշտ գոյության միջոցների նվազագույնով,— այդ հասարակակարգի զարգացումը սարքերաբար ուղեկցվում է ամենադաժան ճգնաժամերով: Ապրանքն ավելի յե լինում, քան կարող են դնել: Փախվում են ֆարքիկաներն ու գործարանները, և բանվորները փողոց են նետվում: Կապիտալիստների պահեստները ճայթում են ապրանքի ավելցուկից, ապրանքի մի մասը վոչնչացվում է, վորովհետեւ չի կարելի վաճառել այն,—մինչդեռ միլիոնավոր բնակ-

չությունը դասադարձութիւնն է սովորական-
թյան, վերաբերեալ նա միջոց չունի հաց,
դեղատ քնելու, բնակարանի վարձ վճարե-
լու:

Կապիտալիստական հասարակարդը,
իմպերիալիզմի բարձրագույն և վերջին իր
ստադիայում, հանգում է իմպերիալիստա-
կան պետութիւններէ միջև մղվող հաղի-
տակողական պայքարի սրմանը: Իմպերիա-
լիստները հափշտակում ու կողոպտում են
դադուլներն ու հետամնաց յերկրները,
ճնշում և ստրկացնում են հետամնաց ու
թույլ ազգերին, ստրկացնում են Ասիայի,
Աֆրիկայի, Հարավային Ամերիկայի ժողո-
վուրդներին և պայքար են մղում միմյանց
դեմ՝ ավելի շատ աւար հափշտակելու հա-
մար: Իմպերիալիստական պետութիւնները
մարդկութեանը նեղեցին 1914—1918 թվա-
կանների կործանիչ և հրեշալի պատերազ-
մի մեջ: Այս նրանք ռազմական արշավ
կազմակերպեցին մեր Խորհրդային Սոցիա-
լիստական հանրապետութեան դեմ, վորը
վերջացավ ԽՍՀՄ հաղթանակով: Նրանք

անընդհատ սլատերազմներ են մղել և մղում
են Աֆրիկայում (Մարոկկո, Հաբեշա-
տան), Մանջուրիայում, Հյուսիսային Զի-
նաստանում: Ամենից ավելի դադանացած
Ֆաշիստական իմպերիալիստական շրջան-
ները նոր հարձակում են պատրաստում
Խորհրդային Միութեան վրա: Կապիտալիզ-
մի սխտեմի հետ անխզելիորեն կապված են
նաև կողոպտիչ պատերազմներն ու այդ
պատերազմների պահանջած միլիոնավոր
զոհերը, ճիշտ այնպես, ինչպես նրա հետ
կապված են տնտեսական ճգնաժամերը և
դաժան դործադրութիւնը:

3. Ռուսաստանի պրոլետարիատը, դաշն
կնքած աշխատավոր դուռը պիտի զոյա-
հանի աշխարհի առաջավոր բանվորների
ոժանդակութեամբ, վոչ միայն ջախջախեց
տապալված դասակարգերի դիմադրութիւն-
նը դաժան մարտերում և դենք ձեռքին
պաշտպանեց իր իշխանութիւնը, այլև ան-
ցյալում հետամնաց, աղքատ և քայքայված
յերկիրը դարձրեց առաջավոր, հզոր և մեծ
սոցիալիստական պետութիւն:

Յերկրի սոցիալիստական վերակառուցման հետեւանքով, վոր բոլշևիկներն կուսակցութեան ղեկավարութեամբ իրականացրին ԽՍՀՄ աշխատավորները, ԽՍՀՄ դարձավ հզոր ինդուստրիայի և կոլեկտիվ հողագործութեան յերկիր, հզոր պաշտպանունակութիւն ունեցող յերկիր, կատարեւապէս ինքնուրույն և կապիտալիստական յերկրների քմահաճույքից անկախ յերկիր:

ԽՍՀՄ մեջ վերացված են կապիտալիստների, կալվածատերերի ու կուլակների մակարույծ դասակարգերը և դրանով իսկ ընդմիշտ վերջ է դրված մարդու շահագործմանը մարդու կողմից: Իրականացված են սոցիալիզմի կարեւորագույն սկզբունքները՝ «չաշխատողը չի ուտի» և «վարձատրութիւն ըստ աշխատանքի»: Աշխատանքը ինքը դարձավ պատվի, արիութեան, փառքի ու հերոսութեան գործ:

Ֆարրիկաներն ու գործարանները, դադարահաններն ու մեքենաները—արտադրութեան բոլոր միջոցներն ու գործիքները պատկանում են վոչ թե կապիտալիստներին, այլ

աշխատավորներին, կազմելով աշխատավոր ժողովրդի սրբազան, անձեռնմխելի հանրային սեփականութիւնը: Յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսութիւնը սոցիալիստական դարձավ: Նա ամբողջովին առաջ է տարվում միասնական սոցիալիստական պլանով: Յերկրի բոլոր հարստութիւնների, նրա ժողովրդական ամբողջ յեկամտի բաշխումը կատարվում է հոգեւտ աշխատավոր մասսաների շահերի:

Միլիոնավոր աշխատավոր գյուղացիներ կամավոր կերպով միացել են կոլտնտեսութիւններում և ընդունել են կոլտնտեսային կյանքի ստալինյան կանոնադրութիւնը: Վերջնականապէս կտրվել են կապիտալիզմի արմատները գյուղում: Վոչնչացվել է այն չիհը, վորով կապիտալիզմը բաժանել երբեք դադար գյուղից:

Խորհրդային յերկիրը անտեսական ճգնաժամ չգիտե: Վերացված է գործադրկութիւնը—բանվոր դասակարգի այդ մշտնջենական սպառնալիքն ու չարիքը: Տարեցուտի աճում է աշխատավորների նյութական

բարեկեցությունը: Յուրաքանչյուր աշխատող գիտե, վոր նա սոցիալիստական հասարակության անդամն է և վոր նրա աշխատանքի արտադրողականությունն ավելացնում է խորհրդային յերկրի հարստությունըն ու զորությունը և միևնույն ժամանակ ունենոր ու կուլտուրական կյանք ե ստեղծում նրա համար:

Պրոլետարական սոցիալիստական մեծ հեղափոխությունն ազատադրեց նախկին Ռուսական կայսրության անցյալում ճնշված ժողովուրդներին: Խորհրդային Միությունը ազատ և իրավահավասար ժողովուրդների յեղբայրական միությունն է: Խորհրդային Միության մեջ չկան ճնշվող ու ճնշող ժողովուրդներ: Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները կողք-կողքի, ուս-ուսի տված կառուցում են սոցիալիզմ և պայքար են մղում ընդհանուր թշնամու դեմ՝ կապիտալիզմի դեմ:

ԽՍՀՄ մեջ կիրնը դարձել է սոցիալիստական հասարակության ինքնուրույն և իրավահավասար աշխատավորուհի: Տղա-

մարդու և կնոջ իրական հավասարության հիման վրա ստեղծվում է նոր ընտանիք, վորի ծաղկման մասին հոգում ե խորհրդային պետությունը:

ԽՍՀՄ մեջ աշխատավոր մարդը վստահություն ձեռք բերեց իր վաղվա որվանկատմամբ: Մարդուն ցուցաբերվող հոգատարությունը դրված է կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանության ուշադրության կենտրոնում: Սոցիալիզմը կենսուրախություն և առույգություն բերեց իր հետ: Աշխատավոր մարդուն առաջին անգամ վերադարձվեց նրա արժանապատվությունը, վորը վտանահարում եյին տիրապետող չահագործողական դատակարարները:

Յերիտասարդության աշխատանքի ու կրթության բոլոր արժատական հարցերը, վորոնք յերբեք չեն կարող լուծվել աշխատավոր յերիտասարդության համար կապիտալիստական իրավակարգի պայմաններում, ԽՍՀՄ մեջ արդեն լուծված են հոգուտ յերիտասարդության:



Խորհրդային իշխանությունն ազատեց
 ԽՍՀՄ՝ յերիտասարդությանն աղքատու-
 թյան ու սովի ծանր լծից և նյութական ա-
 մուր ապահովվածություն տվեց նրան։
 Խորհրդային իշխանության որենքներով 16
 տարեկանից ցածր դեռահասներն աշխա-
 տում են որակյալ չորս ժամ, իսկ 16-ից
 մինչև 18 տարեկան յերիտասարդները՝ վեց
 ժամ, լրիվ աշխատորի վարձատրությամբ։
 Խորհրդային որենքներով արգելված է ա-
 ռանց սեռական որդանների հատուկ թույլ-
 տրվության կիրառել մինչև 18 տարեկան
 յերիտասարդների աշխատանքն ստորերկրյա
 և առողջության համար առանձնապես ծանր
 աշխատանքներում (վնասակար ու վտան-
 դավոր արտադրություններում, տաք, ցե-
 խերում)։ Արգելված է դեռահասների ար-
 տաժամյա աշխատանքը։ ԽՍՀՄ մեջ արտա-
 դրության սոցիալիստական բնույթը դեռա-
 հասների աշխատանքը զուգակցում է նրանց
 անընդհատ ուսուցման ու դաստիարակու-
 թյան հետ։ Այդ նպատակին են ծառայում
 Փարբիկա-գործարանային աշակերտության

դպրոցները (Փարգործուհները)։ Յուրա-
 քանչյուր դեռահաս, աշխատանքի մտնելու
 առաջին օրից, ստանում է սահմանված աշ-
 խատավարձը։ Քանի ալիելացնում է նա իր
 գիտելիքները և արտադրական վարժու-
 թյունը, ալիելանում է նրա աշխատավարձը։

Պետությունը վոչ միայն իր հաշվին
 սովորեցնում է դեռահասներին, այլև խը-
 նամքով պահպանում է նրանց առողջու-
 թյունը։ Այդ նպատակով արգելված է աշ-
 խատանքի ընդունել դեռահասներին առանց
 բժշկական նախնական քննության. ամեն
 տարի բոլոր դեռահաս բանվորները յեն-
 թարկվում են բժշկական քննության,
 ստեղծվել է հանգստի տների և սանատո-
 րիանների լայն ցանց՝ աշխատավոր յերի-
 տասարդության համար։ Հատկապես
 ստեղծված բուժական հիմնարկները պահ-
 պանում են յերիտասարդությանը սոցիա-
 լական հիվանդություններից,՝ վորոնք ժա-
 ոանդություն են մնացել կապիտալիստա-
 կան հասարակարգից (տուբերկուլոզ,
 տրախոմա և այլն)։

Արմատապես փոխվեց գլուխացիական
 յերկտասարգության գլուխութունը: Կուլա-
 կության վերացման և կուլտոսեսային կար-
 դի ամրացման շնորհիվ չքացավ աղքատու-
 թյունը գլուխում և դրա հետ միասին չքա-
 ցավ գլուխի աշխատավորության՝ անցյալում
 իրավագուրկ և ճնշված խավը—չքավորու-
 թյունը: Վոչնչացված է կուլակային ճոր-
 տությունն ու սարկությունը, յերեխա ու
 դեռահաս բատրակների անորինակ շա-
 հագործումը: Կուլտոսեսային կարգը գլու-
 խացիական յերկտասարգության համար
 ստեղծեց ազատ աշխատանքի, լուսավորու-
 թյան լայն հնարավորություն և հաղորդա-
 կից է դարձնում նրան քաղաքային կուլ-
 տուրային: Հին, բուրժուական դպրոցի փո-
 խարենն ստեղծված է նոր, խորհրդային
 դպրոց, վորտեղ բոլոր պայմանները կան՝
 խսկական գիտելիքներ ձեռք բերելու գի-
 տության բոլոր բնագավառներում: Մըտ-
 ցված է ընդհանուր պարտուղի ճրի տար-
 րական ուսում 8-ից մինչև 12 տարեկան
 բոլոր յերեխաների համար, և հաջորդու-

թյամբ իրականացվում է 7-ամյա ուսումը
 ԽՍՀՄ մեջ բնակվող բոլոր ազգությունների
 մայրենի լեզվով:

ԽՍՀՄ յերկտասարգությունը հնարա-
 վորություն ստացավ տիրապետելու իր ու-
 դած մասնագիտությանը, հասնելու գիտե-
 լիքների ցանկացած մակարդակին, վորով-
 հետև ԽՍՀՄ մեջ բոլոր աշխատավորներին
 լայնորեն մատչելի յե վոչ միայն տարրա-
 կան, այլև միջնակարգ ու բարձրագույն
 կրթությունը: Յերկտասարգության ընտ-
 բած յուրաքանչյուր մասնագիտությունը
 Խորհրդային յերկրում հավասարապես
 պատվավոր ու հարգելի յե:

Սոցիալիզմն իրականություն է դարձել
 Խորհրդային Սոցիալիստական Հանրապե-
 տությունների մեծ Միության բաղմամբ լի-
 ինոն ժողովուրդների համար: Ստեղծվեց
 աշխատավորների սոցիալիստական հասա-
 րակություն: Պայմաններ են նախապատ-
 րաստվում սոցիալիզմից՝ կոմունիստական
 հատարակության առաջին աստիճանից լիա-
 կատար կոմունիզմին անցնելու համար:

4. Բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիութեան հետ միասին, հաղթեց մեր յերկրում կապիտալիստներին, կալիա-ծատերերին, կուլակներին և սոցիալիզմ կա-ռուցեց միայն այն պատճառով, վոր նա, բոլշևիկներին կուսակցութեան ղեկավարու-թյամբ, ստեղծեց իր ուժեղ ու հզոր իշխա-նութիւնը, խորհրդային իշխանութիւնը՝ բանվորների ու գյուղացիների պետու-թիւնը:

Սորհրդային իշխանութիւնը կոտրեց աշխատավորութեան թշնամիների դիմա-դրութիւնը, ջախջախեց նրանց բանակները քաղաքացիական պատերազմում, ճնշեց և ճնշում է դասակարգային թշնամիների բո-լոր փորձերը՝ թուլացնել սոցիալիստական շինարարութեան գործը և վնասել աշխա-տավորներին:

Սորհրդային իշխանութիւնն ամենադե-մոկրատական, ամենաժողովրդական իշխա-նութիւնն է, վորովհետև նա պետական գործերն անմիջականորեն վարելուն ներ-դրւում է և պետութեան կառավարմանը

մասնակից է դարձնում քաղաքի ու գյուղի բոլոր աշխատավորներին՝ անկախ սեռից և ազգութիւնից:

Սորհրդային իշխանութիւնը, ամրա-պնդելով իր յերկրի պաշտպանունակու-թիւնը և փառապանծ Կարմիր բանակը, պաշտպանում է աշխատավորների հայրե-նիքը իմպերիալիստական դիշատիչներէց:

Սորհրդային իշխանութիւնը պահպա-նում է հանրային սոցիալիստական սեփա-կանութիւնը և խստիւ հետևում է, վոր կատարվի «յուրաքանչյուրից ըստ ընդու-նակութիւնների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» սոցիալիստական կանոնը:

Սորհրդային իշխանութիւնը արմա-տացնում է կարգապահութիւն, հարգանք դեպի սոցիալիստական որենքներն ու հա-մակեցութեան կանոնները, բոլոր աշխատա-վորների մեջ դաստիարակում է ազնիւ վե-րարեւմունք դեպի աշխատանքը և հասարա-կական պարտականութիւնը, առանց վորի չի կարող իրականացվել սոցիալիզմի լիա-կատար հաղթանակը:

5. Համկ(ր)ն-ն և խորհրդային կառավարութիւնը կառուցում են կոմունիստական հասարակւորդը, այնպիսի հասարակւորդ, վորտեղ միջ միտյն չկա արտադրության միջնոցների մասնավոր բնականւթյուն և վորնչացված են գանակարդերն ու մարդու շահագործումը մարդու կողմից, այլև վորտեղ կանհետանան մարդկանց տնտեսական անհավասարություն վերջին մնացորդները, վորտեղ աշխատանքը գոյության միջոցից դառնալու յն առաջնակարգ կենսական տղահանք, մարդու տեղծագործ ընդունակությունների բերկրալից դրսևորում, վորտեղ դիտության, տեխնիկայի, աշխատանքի արտադրողականության ծաղկման շնորհիվ հասարակությունը կհասնի այնպիսի առատության, այնպիսի հարստության, վոր սոցիալիստական բաշխման «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» սկզբունքը կիմաստնալի լիակատար կոմունիզմի սկզբունքով, այն և՛ «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների,

յուրաքանչյուրին ըստ պահանջմունքնի թիւ:

Այդ հասարակության մեջ վերջնականապէս կանհետանա մտաւոր և ֆիզիկական տշխտամանքի հակադրությունը: Գիտությունը և արվեստը կհասնեն չտեսնված ծաղիկման: Ամեն տեսակ կառուցմանը օգտակարութեանը պարզեցումը, կազմակերպմանը պարզեցումը, կազմակերպմանը լիակատար հնարավորություն կտանա քաղաքացիական կեդրով զարգացնելու իր տաղանդը և ընդունակությունները: Յուրաքանչյուր մարդ կամաւոր կերպով կսկսէ իր համակեցութեան բոլոր կանոնները և կսովորեցնուի իր ընտանիքի, ընկերակցութեան, բոլոր նոյնականները, վերջնականապէս կանհետանա սկսական իշխանութեան անհրաժեշտությունը:

Համամիութենական Լենինյան Կոմունիստական Յերիտասարդական Միությունը հանդիսանում է Համկ(բ)Կ-ին՝ հարող մասնաշաղկապի անկուսակցական մի կազմակերպություն, իր շարքերում միացնում է քաղաքի և գյուղի առաջավոր, քաղաքականապես գրագետ աշխատավոր յերիտասարդու-

Թյան լայն խալէրը: ՀամԼԿՅԵՄ-ի խնդիրն
է ոգնել կոմունիստական (բոլշեւիկներն)
կուսակցութեանը՝ յերիտասարդութեանն ու
յերեսաններին կոմունիզմի վոգոյ՝ դաստիա-
րակելու գործում: ՀամԼԿՅԵՄ-ը, համա-
կրելով ՀամԿ(բ)Կ-ի ծրագրին, ոգնում է
բոլշեւիկներն կուսակցութեանը և խորհրդ-
դային կառավարութեանը՝ կատարելու
սրտմական մեծ խնդիրը—կոմունիստական
հասարակութեան կառուցումը:

ՀամԼԿՅԵՄ-ը հանդիսանում է ՀամԿ(բ)
Կ-ի ոգնականը և ղեկավարը:

ՀամԼԿՅԵՄ-ն իր ամբողջ աշխատան-
քով, ՀամԿ(բ)Կ-ի ղեկավարութեամբ, բան-
վորական, գյուղացիական, ծառայող յերի-
տասարդութեանից և յերիտասարդ ինտելի-
գենցիայից դաստիարակում է խորհրդային
իշխանութեանը նվիրված, կրթված մար-
դէկ, խիզախ ու վճռական մարդէկ, վորոնք
չեն վախենում զրկանքներից ու ղեկավարու-
թեաններից, մարդէկ, վորոնք ատում են
բանվոր դասակարգի թշնամիներին, մար-
դէկ, վորոնք համար «նպատակի սարգորդ»

շուքունը, նպատակին հասնելու գործում
աննկունութեանը և բնավորութեան հաս-
տատակամութեանը, վոր վոչնչացնում է
բոլոր ու ամեն տեսակի խոչընդոտները»
(Ստալին), հանդիսանում է նրանց ղեկավար
հատկութեանը:

Քաղաքի և գյուղի ամբողջ աշխատա-
վոր յերիտասարդութեանը կոմունիզմի վո-
գով դաստիարակելու և նրան խորհրդային
իշխանութեան շուրջը կազմակերպելու հա-
մար Համամիութենական Լենինյան Կոմու-
նիստական Յերիտասարդական Միութեանը
հետեւյալ խնդիրներն է դնում իր առջև.

I

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍՏՏԻԱՐԱԿՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1. Հետեւելով Լենինի այն ցուցումնե-
րին, թե կոմունիստական աշխարհայացք
մշակելը—սրբիւտարիատի գիտական—հեղա-
փոխական թեորիային տիրապետելը—հիմ-
նական պայման է յերիտասարդութեանը
կոմունիզմի վոգով դաստիարակելու հա-

մար, ՀամԼԿՅՆՄ-ը յուրաքանչյուր կոմյունիստականի համար պարտադիր և համարում քաղաքական կրթություն ստանալը: Այդ նպատակով ՀամԼԿՅՆՄ-ն ստեղծում և դըստրոյներ, խմբակներ և իրականացնում և այլ ձևանարկումներ, վարդապետի յերիտասարդությունը յուրացնի քաղաքական գրագիտություն, ուսումնասիրի ընդհանրապես պատմության և մանավանդ ԽՍՀՄ և Համամիութենական կոմունիստական կուսակցության պատմության հիմնական մոմենտները, կադմակերպում և Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի հիմնական գաղափարների ուսումնասիրումը յերիտասարդության կողմից:

2. ՀամԼԿՅՆՄ-ն աշխատանք և կատարում բանվորական, գյուղացիական, ծառայող, ուսանող ամբողջ յերիտասարդությանը և յերիտասարդ ինտելիգենցիային քաղաքականապես դաստիարակելու համար, ժողովների, գրույցների, դասախոսությունների միջոցով ծանոթացնում և նրան ընթացիկ քաղաքական անցքերին, խորհրդային

կառավարության և Համամիութենական կոմունիստական (բուլեղիկների) կուսակցության ձեռնարկումներին, ծանոթացնում և յերիտասարդությանը բանվորների ու գյուղացիների անցյալ կյանքին, կապիտալիստական յերկրներում նրանց ունեցած կյանքին, ԽՍՀՄ քաղաքացիական պատերազմի պատմությանը, դաստիարակելով յերիտասարդությանը կապիտալիստների ու կալվածատերերի դեմ բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության մղած հերոսական պայքարի ուղիսակներով: ՀամԼԿՅՆՄ-ը հատարակում և իր թերթերը, ժուռնալները, քաղաքական ու գեղարվեստական գրականություն, կադմակերպում և յերիտասարդության ակումբներ և աշխատանք և կատարում ընդհանուր բանվորական ու կոլտնտեսային ակումբներում, գրադարաններում և ընթերցարաններում:

3. ՀամԼԿՅՆՄ-ը համբերատար կերպով բացատրում և յերիտասարդությանը սնտիսպաշտության և կրոնական նախապաշարմունքների վնասը, կադմակերպելով այդ

նպատակով հատուկ խմբակներ ու դասախոսություններ հակալրոնական պրոպագանդայի ուղղությամբ:

4. ՀամԼԿՅՆՄ-ը դաստիարակչական աշխատանք է կատարում առաջ գոյություն ունեցող ազգային անիրավահավասարության մնացուկների դեմ, չովինիզմի, նացիոնալիզմի ամեն տեսակ դրսևորումների դեմ, ամբողջ յերիտասարդությանը դաստիարակելով պրոլետարական խնտերնացիոնալիզմի վոգով:

ՀամԼԿՅՆՄ-ի կազմակերպությունները քաղաքական-դաստիարակչական աշխատանք են կատարում յերիտասարդության մեջ՝ ԽՍՀՄ Ժողովուրդների մայրենի լեզվով, համաձայն նրանցից յուրաքանչյուրի պայմաններին ու առանձնահատկություններին:

5. ՀամԼԿՅՆՄ-ը կազմակերպում է գանադան դասընթացներ ու դպրոցներ՝ կոմյերիտմության աշխատանքի տարբեր բնազավառների համար պրոպագանդիստներ ու կազմակերպիչներ պատրաստելու ու վերապատրաստելու նպատակով:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵՉՈՒՄ

1. ՀամԼԿՅՆՄ-ն իր ամբողջ աշխատանքում յենում է այն անհրաժեշտությունից, վոր պետք է «տիրապետել գիտությանը, կերտել բուշեիկ մասնագետների նոր կարերը գիտության բոլոր բնազավառներում, սովորել, սովորել, սովորել ամենահամառկերպով» (Ստալին), Ի. Վ. Ստալինի այն ցուցումներից, թե անհրաժեշտ է բանվոր դասակարգի կուլտուրական-տեխնիկական մակարդակը հասցնել ինժեներ-տեխնիկական աշխատողների մակարդակին:

2. Այդ նպատակով ՀամԼԿՅՆՄ-ի կազմակերպությունները—

ա) ողնում են պետական որդաններին՝ ամրացնելու և զարդացնելու խորհրդային դպրոցը, կենսագործելու ընդհանուր պատաղիր յոթնամյա, ապա նաև տասնամյա ուսումը.

բ) պետական և հասարակական որդան-

ների հետ միասին կազմակերպում են յերիտասարդության միջնակարգ քննահանուր ու տեխնիկական կրթություն ստանալը՝ առանց արտադրությունից կարվելու:

դ) ըստ ամենայնի ոգնություն են ցույց տալիս ԽՍՀՄ մեջ բարձրագույն կրթության զարգացման դործին (ինժեներների, բժիշկների, ագրոնոմների, մանկավարժների պատրաստումը և այլն):

դ) ակտիվ պայքար են մղում յերիտասարդության միջից անգրագիտությունն ու կիսագրագիտությունը լիովին վերացնելու համար:

ե) կազմակերպում են զանազան տեսակ խմբակներ, դպրոցներ ու դասընթացներ՝ տեխնիկական և հանրակրթական դիտելիքները բարձրացնելու և ոտար լիցուներ ուսումնասիրելու համար:

զ) պայքար են մղում «ամենազեղալից» դեմ և գիտության ուսումնասիրմանը մակերեսային վերաբերմունք ցուցարկելու դեմ, վորպեսզի յուրաքանչյուր կոմյերիտական անպայման ուսումնասիրի վո-

րեն մասնագիտության, վորին պետք է տիրապետի կատարելապես:

III

ԴՊՐՈՑՈՒՄ ՅԵՎ ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՄԵՋ
ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՍՊԱՐԵՋՈՒՄ

1. Ոգնում է ժողովրդական կրթության որդաններին և ուսուցիչներին՝ ամրացնելու դպրոցական կարգապահությունը և կազմակերպելու դպրոցի ուսումնական ամբողջ աշխատանքը:

2. Պայքար է մղում հակաժողովրդական ազդեցությունները դպրոցի մեջ թափանցելու դեմ, պայքար է մղում խուլիգանության ու թափթիվածության դեմ:

3. Միտումատիկաբար ծանոթացնում է աշակերտներին որվա կարևորագույն անցքերի հետ, կազմակերպելով զանազան տեսակ խմբակներ, դասախոսություններ ու դրույցներ:

4. Սովորող յերիտասարդության ամենաբազմապիսի պահանջներին բավարարելու համար, ինքնադործունեյության հիման

վրա կազմակերպում է Ֆիզիկական կուլ-
տուրայի, յերաժշտական, դրամատիկա-
կան, ֆուտո և ռադիոսիրողների, մոդելիստ-
ների, պատանի զյուտարարների խմբակներ
և այլն:

5. Կազմակերպում է աշակերտների
հանգիստն ու խեղացի ժամանցը (ինքնադուր-
ծունեյության յերեկույթներ, կինոների,
թատրոնների, թանգարանների այցելում,
էքսկուրսիաներ, տուրիստական արշավներ
և այլն):

6. Ակտիվ մասնակցում է ուսուցիչների
պատրաստմանը, մանկավարժական աշխա-
տանքի ուղարկելով իր լավագույն ուժերին:

7. Կազմակերպում է դպրոցներում
պիտներական ջոկատներ և հոկտեմբերիկնե-
րի խմբակներ:

8. Լավագույն կոմյերիտականների մի-
ջից ընտրում է պիտներական ջոկատների ու
ֆորպոստների ղեկավարներ, ջոկատներին
ու ֆորպոստներին կից աշխատող զանազան
խմբակների ղեկավարներ և անհրաժեշտ

ոգնություն է ցույց տալիս նրանց աշխա-
տանքում:

9. Պրոֆմիությունների և ժողովրդա-
կան կրթության որդանների հետ միասին
ստեղծում է պիտներական ճամբարներ,
մանկական ակումբներ, պալատներ, սպոր-
տային հրապարակներ, սանատորիումներ,
մանկական տեխնիկական կայաններ և այլն:

10. Յերեխաների համար հրատարակում
է ղեղարվեստական և գիտական հանրա-
մատչելի տեխնիկական ղրականություն և
հոգ է տանում, վոր արտադրվեն պիտներա-
կան հանդերձանք, լավ խաղալիքներ և
այլն:

IV .

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1. Կազմակերպում է ամբողջ յերիտա-
սարդության ներդրավումը Ֆիզիկական
կուլտուրայի մեջ, ձգտում է, վոր իՍՀՄ
ունենա սպորտային լավագույն նվաճում-
ներ:

2. Ակտիվ մասնակցում ե ֆիզիկական կուլտուրայի պետական որդանների և հասարակական կազմակերպությունների աշխատանքին, ստեղծելով զանազան տեսակ սպորտային կազմակերպություններ:

3. Ակտիվ մասնակցում ե սպորտային կառուցումների շինարարությունը (սպորտային հրապարակներ, ստադիոններ, սպորտային դահլիճներ, ավազաններ, անբուհումրներ և այլն) և ոժանդակում ե սպորտային ինվենտարի արտադրությունը:

4. Իր ուժերն ե հատկացնում ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչների ու կազմակերպիչների կադերը պատրաստելու համար:

Վ.

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱՄՊԱՐԵԶՈՒՄ

1. Հետևելով ՀամԿ(Բ)Կ-ի այն ցուցումներին, թե յերիտասարդութան կոմունիստական դատախարակությունը պետք ե կատարվի այնպես, Վոր նրա ուսման ու

կրթութան յուրաքանչյուր քայլը կապված լինի կոմունիստական հասարակություն ստեղծելու համար մղվող պայքարի հետ, ՀամԿՅՅՄ-ն ամբողջ աշխատավոր յերիտասարդությունը մասնակից ե դարձնում սոցիալիստական շինարարությունը: ՀամԿՅՅՄ-ի կազմակերպությունները յերիտասարդությունը պարզաբանում են սոցիալիստական շինարարության խնդիրները, ծանոթացնում են նրան ԽՍՀՄ Ժողովրդական տնտեսության զարգացման պլանի հետ, մասնակցում են ՀամԿ(Բ)Կ-ի և խորհրդային կառավարության անցկացրած քաղաքական կամպանիաներին, ըստ անհրաժեշտության մոբիլիզացիայի յեն յենթարկում իրենց ուժերը սոցիալիստական շինարարության ամենահարմար ճակատամարտի համար: Մասնակցում են խորհրդային որդանների առօրյա աշխատանքին, ամրացնելով խորհուրդները: Ողնում են խորհրդային իշխանությունը՝ պայքար մղելու խորհրդային և տնտեսական որդանների աշխատանքում

գոյություն ունեցող բյուրոկրատական խեղաթյուրումների գեմ:

2. ՀամԼԿՅԵՄ-ն ոգնում է բոլքեիկների կուսակցությանը՝ կազմակերպելու սոցիալիստական մրցությունը, նախաձեռնություն ու ձեռնբերելություն ցուցաբերելով այդ գործում: Կոմյերիտականը պետք է իր հարվածային աշխատանքով որինակ տա և դրանով դրավի ամբողջ յերիտասարդությանը: ՀամԼԿՅԵՄ-ը կոմունիստական վերաբերմունք է դաստիարակում ղեպի աշխատանքը, բարեխիղճ վերաբերմունք՝ խորհրդային իշխանության հանդեպ ունեցած պարտականությունների կատարմանը, աշխատանքային գործունեություն պահանջելով կոմյերիտականներից ու կոմյերիտուհիներից՝ յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների: ՀամԼԿՅԵՄ-ը յերիտասարդության համար որինակ է բերում ավագ ընկերների՝ հարվածայինների և հարվածայնուհիների հերոսական աշխատանքի և աշխատանքային սխրագործությունների նմունքները:

ՀամԼԿՅԵՄ-ը պայքար է մղում ձեռնարկություններում, տրանսպորտում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում և հիմնարկություններում աշխատանքի արտադրողականության առավելագույն բարձրացման և աշխատանքային կարգապահության ամրացման համար:

3. ՀամԼԿՅԵՄ-ն աշխատանք է կատարում ամբողջ յերիտասարդությանը դաստիարակելու այնպիսի վոգով, վոր նա պահպանի ու ամրացնի սոցիալիստական սովականությունը, վորը հանդիսանում է խորհրդային հասարակակարգի հիմքը:

4. ՀամԼԿՅԵՄ-ն ոգնում է խորհրդային պետությանը՝ ամրացնելու ընտանիքը և հոգ տանելու յերեխաների ու մայրերի համար, պայքար է մղում կանանց նկատմամբ արտահայտվող՝ կասկածալից մնացուկների գեմ, յերիտասարդության մեջ հարգանքի զգացմունք դաստիարակելով ղեպի կինը՝ վորպես սոցիալիստական շինարարության իրավահավասար մասնակիցը:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1. Խորհրդային Միության յերիտա-
սարգ սերունդը պարտավոր է իրեն պատ-
րաստել պաշտպանելու իր հայրենիքը բոլոր
վտանգներից և թշնամիների կողմից նրա
դեմ ուղղված վտանգություններից: «Մենք
պաշտպանողականներ ենք սկսած 1917 թ.
նոյեմբերի 7-ից (հոկտեմբերի 25-ից):
Մենք կողմնակից ենք «հայրենիքի պաշտ-
պանության», սակայն հայրենական այն
պատերազմը, դեպի վորն ընթանում ենք
մենք, մի պատերազմ է հանուն սոցիալիս-
տական հայրենիքի, հանուն սոցիալիզմի,
վերպես հայրենիքի, հանուն խորհրդային
հանրապետության, վերպես սոցիալիզմի
համաշխարհային բանակի մի ջոկատի» (Լե-
նին): Անհաճանջ կերպով հետևելով մեծ
Լենինի այդ ավանդին, ՀամԼԿՅՅՄ-ը յերի-
տասարգ սերունդը դաստիարակում է խոր-
հրդային հայրենասիրության վեգով, ան-

հուն նվիրվածությամբ և անսահման սիրով
դեպի ԽՍՀՄ-ն—իր հայրենիքը: Անճնվիրա-
բար պաշտպանել սոցիալիստական հայրե-
նիքը, ամրացնել նրա գոյությունը, բար-
դավաճումն ու փառքը—ՀամԼԿՅՅՄ-ի ան-
դամի ամենատրբազան ու կենսական պար-
տականությունն է:

ՀամԼԿՅՅՄ-ը յերիտասարդությունը դաս-
տիարակում է այնպիսի վեգով, վոր նա
պատրաստ լինի խորհրդային կառավարու-
թյան առաջին խի կոչով պայքարի դուրս
գալու սոցիալիստական հայրենիքի թշնամի-
ների դեմ:

2. ՀամԼԿՅՅՄ-ը յերիտասարդության
մեջ դաստիարակում է քաջություն ու ան-
հողողդություն, արհամարհանք դեպի
վախկոտությունն ու յերկյուղը խորհրդային
իշխանության թշնամիների հանդեպ, ամե-
նախիտ կարգապահության վեգի: Համ.
ԼԿՅՅՄ-ը յերիտասարդությանը դաստիա-
րակում է ատելության վեգով դեպի դասա-
լքությունը, մատնությունը, դավաճանու-
թյունը սոցիալիստական հայրենիքին, վոր-

պէս ամենամանր ու ստոր չարադործություններ սոցիալիստական պետութեան չահերի դեմ: ՀամԼԿՅՅՄ-ի անդամները և ամբողջ յերիտասարդությունը պետք է մերկացնեն և բանխորա-դուղացիական պետութեան դատաստանին հանձնեն բոլոր նրանց, ովքեր կղավաճանեն հայրենիքի շահերին:

3. ՀամԼԿՅՅՄ-ը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միութեան պաշտպանունակությունն ամրացնելու ուղղութեամբ իր կատարած ամբողջ աշխատանքում յենում է ՀամԿ(բ)Կ-ի և խորհրդային կառավարութեան այն քաղաքականութեանից, վոր «մենք կողմնակից ենք խաղաղութեանը և պաշտպանում ենք խաղաղութեան դրոշմը: Սակայն մենք չենք վախենում սպառնալիքներից և պատրաստ ենք հարվածով պատասխանելու պատերազմի հրձիգների հարվածին» (Ստալին): Ակտիվ կերպով ոժանդակել խորհրդային պետութեանը ամրացնելու և զարգացնելու ղինված ուժերը լենինյան կոմյերիտմիութեան կարևորագույն պարտականությունն է: Այդ նպատա-

կով ՀամԼԿՅՅՄ-ը շեփություն է կատարում Բանվորա-դուղացիական Կարմիր բանակի, ռազմածովային և ռազմա-ողային ուժերի նկատմամբ և ապահովում է Բանվորա-դուղացիական Կարմիր բանակը խորհրդային իշխանութեանը նվիրված մարդկանց այնպիսի կազերբրով, վորոնց ձեռքը չի դողա և աչքը չի դավաճանի հեղափոխական ժողովրդի թշնամիների դեմ մղվող մարտերում:

ՀամԼԿՅՅՄ-ը յերիտասարդութեան մեջ ռազմական գիտելիքների պրոպագանդա յե մղում, ահաբիվ մասնակցում է պաշտպանութեան հասարակական կազմակերպությունների աշխատանքին և ձգտում է, վոր յուրաքանչյուր կոմյերիտական դեռ բանակի ու նավատորմի շարքերը մտնելուց առաջ տիրապետի դիպուկ հրաձգութեան արվեստին, ուսումնասիրի ռազմական մասնագիտություններից մեկը:

Համամիութենական Կոմունիստական Յերիտասարդական Միութեանը կրում է հա-

մայն աշխարհի աշխատավորութեան ուսուցչի ու առաջնորդի՝ վ. Ի. Լեւինի առնուելը:

Լեւինյան կոմյերիտմիութեանը կապիտալիստներին, կալվածատերերին, ինտելիկենտներին դեմ մշլված քաղաքացիական պատերազմում իր մատուցած մարտական ծառայութեանների համար արժանացել է հեղափոխական բարձրագույն պարգևի—մարտական Կարմիր դրոշի շքանշանի:

Սոցիալիստական հասարակութեան կառուցման ասպարեզում իր կատարած հարվածային աշխատանքի համար, վորը փառքով պսակեց Խորհրդային Միութեան աշխատավոր յերիտասարդութեանը, լեւինյան կոմյերիտմիութեանը պարգևատրվեց Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով:

Լեւինյան կոմյերիտմիութեանը, իր աշխատանքը կատարելով ԽՍՀՄ աշխատավոր յերիտասարդութեան մեջ, Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցութեան ղեկավարութեամբ, հավատա-

րիմ Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի ուսմունքին, պատվով կկատարի սոցիալիստական հայրենիքի հանդեպ ունեցած իր բոլոր պարտականութեանները:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՔՆԴՈՒՆՎԱԾ Ե ՀԱՄԼԿՅԵՄ X ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ
1936 թ. ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ

ՀամԼԿՅՆՄ-ը Յերիտասարդության Կոմունիստական Խնտերնացիոնալի ջոկատնե-րից մեկն է, ընդունում է նրա ծրագիրն ու կանոնադրությունը, կատարում է նրա վո-րոշումները և ակտիվ մասնակցում է նրա աշխատանքին:

ՀամԼԿՅՆՄ-ը հարում է ՀամԿ(Բ)Կ-ին, հանդիսանում է նրա ռեզերվն ու ոգնակա-նը: Բուլչևիկյան կուսակցության ղեկավա-րությամբ ՀամԼԿՅՆՄ-ը յերիտասարդու-թյանը դաստիարակում է կոմունիզմի վո-դով, նրան համախմբում է խորհրդային իշխանության շուրջը:

ՀամԼԿՅՆՄ-ը մասսայական անկուսակ-ցական կազմակերպություն է, վորն իր շարքերում համախմբում է քաղաքի և գյու-ղի առաջավոր, քաղաքականապես գրագետ

աշխատավոր յերիտասարդության լայն խա-
վերին: Հետեւելով բոլլէիզմի մարտական
տրագիցիաներին, կոմյերիտմիությունն ու-
ժեղ ե իր դադախարական համոզմածու-
թյամբ և նվիրվածությամբ՝ Լենինի—Ստա-
լինի կուսակցությանը: Վորեւ չեղում Համ.
ԼԿՅՅՄ-ի ծրագրից՝ անհամատեղելի յե
կոմյերիտմիության մեջ մնալու հետ:

ՀամԼԿՅՅՄ-ն իր անդամներից պահան-
ջում ե հաստատակամ և աննկուն պայքար
մղել հանուն բոլլէիզմների կուսակցության
գլխավոր գծի իրականացման: ՀամԼԿՅՅՄ-ի
անդամները պարտավոր են ամբողջ ուժով
ամրապնդել խորհրդային հասարակակար-
գը, ամրապնդել խորհրդային արդյունաբե-
րությունն ու արանսպորտը, կոլտնտեսու-
թյուններն ու խորհանտեսությունները, ան-
հաշտ պայքար մղել դասակարգային թշնա-
մու և ամեն գույնի ոպորտունիստների դեմ,
անողոք հակահարված տալ կոմյերիտմիութ-
յունը բոլլէիզմների կուսակցությանը
հակադրելու ամեն տեսակ փորձերին, ամ-
րապնդել յեղբայրական ինտերնացիոնալ

հարաբերությունները ԽՍՀՄ-ի բոլոր ազ-
գերի աշխատավորների և բոլոր յերկրների
պրոլետարների միջև:

Կոմյերիտականը մեծագույն պատիվ և
համարում իրեն համար ՀամԿ(բ)Կ-ի ան-
դամ դառնալն ու իր ամբողջ գործունէյու-
թյամբ և ուսմամբ իրեն նախապատրաս-
տում ե նրա շարքերը մտնելու համար:

I

ՀԱՄԼԿՅՅՄ-Ի ԱՆՊԱՄՆԵՐԻ ՈՒ ԹԵԿՆԱ-
ԾՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ՀամԼԿՅՅՄ-ի անդամ ե համարվում
կոմյերիտմիության շարքերն ընդունված
յուրաքանչյուր վոք՝ 15-ից մինչև 26 տա-
րեկան, վորն ընդունում ե միության ծրա-
գիրն ու կանոնադրությունը, աշխատում ե
նրա կազմակերպություններից մեկում, յեւ-
թարկվում ե ՀամԼԿՅՅՄ-ի բոլոր վորոշում-
ներին և մուծում ե անդամավճար:

Ծանոթություն. — ՀամԼԿՅՅՄ-ի 26 տա-
րեկան հասակի հասած անդամները կա-

րող են մնալ կազմակերպության մեջ խորհրդակցական ձայնի իրավունքով, իսկ ղեկավար մարմիններում ընտրվելու գեպընդ նրանք պահպանում են վճռական ձայնի իրավունքը:

2. ՀամԼԿՅՆՄ-ի անդամները պարտավոր են՝

ա) ուսումնասիրել Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի աշխատությունները և պարզաբանել մարքսիստական-լենինյան ուսմունքը յերիտասարդության լայն մասսաներին.

բ) կատարել բոլշևիկների կուսակցության ու կոմյերիտմիության վերջնականները և ակտիվ մասնակցել յերկրի քաղաքական կյանքին.

գ) աշխատանքի նկատմամբ սոցիալիստական վերաբերմունքի որինակ ցույց տալ, աշխուրջ պահպանել սոցիալիստական սեփականությունը, պայքարել հարբեցողության, խուլիգանության դեմ, կրոնական նախապաշարմունքների միացորդների դեմ,

կնոջ նկատմամբ վոչ-ընկերական վերաբերմունքի դեմ.

դ) տիրապետել ղիտելիքներին, կուլտուրային, գիտությունը, տեխնիկային:

ե) ուսումնասիրել ռազմական գործը, անձնուրաց կերպով նվիրված լինել սոցիալիստական մեծ հայրենիքին և պատրաստ լինել տալու նրան իր բոլոր ուժերը, իսկ յեթե անհրաժեշտ լինի՝ նաև կյանքը.

զ) վճռականորեն պայքարել հեղափոխական որինականության ու կարգի խախտումների դեմ.

է) ակտիվ մասնակցել կոմյերիտական կազմակերպության աշխատանքին, կանոնավոր հաճախել կոմյերիտական ժողովները, արագգորեն ու ճշգրիտ կատարել կազմակերպության առաջադրանքները, մինչև վերջը հասցնելով սկսած յուրաքանչյուր գործը:

3. Կոմյերիտմիության անդամ ընդունվում է առաջավոր, ոտուղված, խորհրդային իշխանությունը նվիրված յերիտասար-

դուժյունը՝ բանվորներին, գյուղացիներին և ծառայողներին միջոց:

Այն դեպքում, յերբ կոմյերիտմիության շարքերն ընդունվել ցանկացողը դեռևս բավարար չափով պատրաստված չե Համ. ԼԿՅԵՄ-ի անդամ ընդունվելու համար, նա ընդունվում է թեկնածու՝ վեց ամիս ժամանակով: Թեկնածուական ստաժը սահմանվում է նրա համար, վոր կոմյերիտմիության մեջ ընդունվել ցանկացողը պատրաստվի այդ բանի համար, ծանոթանա Համ.ԼԿՅԵՄ-ի ծրագրին ու կանոնադրությանը և վերացնի իր քաղաքական անդրադիտությունը: Ընդունելությունը կոմյերիտմիության մեջ կատարվում է անհատական կարգով:

ա) Համ.ԼԿՅԵՄ-ի անդամ կամ թեկնածու ընդունվողները ներկայացնում են կոմյերիտմիության մեկ տարվա ստաժ ունեցող յերկու անդամի կամ կուսակցության մեկ անդամի յերաշխավորությունը:

Յերաշխավորություններն ստուգում է կոմյերիտմիության տեղական կոմիտեն

անպայման մինչև ընդունելության հարցի քննարկումը:

Յերաշխավորողները պատասխանատու յեն իրենց յերաշխավորյալի համար, անհիմն յերաշխավորության դեպքում յենթարկվելով միութենական տույժի՝ ընդհուպ մինչև կոմյերիտմիությունից հեռացվելը:

բ) Կոմյերիտմիության մեջ ընդունելուն պետք է նախորդի նախնական ստուգումն այն հիմնական տվյալների, վոր հաղորդում է իր մասին ընդունվողը, և ընդունելության հարցը քննության է առնվում սկզբնական կոմյերիտական կազմակերպության կոմիտեյի կողմից, լուծվում է սկզբնական կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից և ուժի մեջ է մտնում կոմյերիտմիության շրջկոմի կամ քաղկոմի բյուրոյի հաստատումից հետո:

Համ.ԼԿՅԵՄ-ի անդամների ու թեկնածուների ստաժը հաշվվում է այն որվանից, յերբ համապատասխան կոմյերիտական սկզբնական կազմակերպության ընդհանուր

Ժողովը վերջում ե կայացրել ընդունելութ-
յան մասին:

դ) Թեկնածուից անդամ վոխադրելու
ժամանակ կոմյերիտական կազմակերպու-
թյունները պետք ե ստուգեն, թե տվյալ
թեկնածուն պատրաստ ե արդյոք կոմյե-
րիտիտիտյան անդամ ընդունվելու համար:
Այն դեպքում, յերբ թեկնածուն իրեն ցույց
չի տվել իրրե լենինյան կոմյերիտիտիտյան
անդամի կոչման արժանի, կազմակերպու-
թյունն իրավունք ունի յերկարաձգել նրա
թեկնածուական ստաժը կամ թե հետացնել
նրան թեկնածությունից:

4. ՀամԼԿՅՅՄ-ի անդամներն ու թեկնա-
ծուները մեկ կազմակերպությունից մյուսն
անցնելիս վերջին կազմակերպության մեջ
են մացվում միայն կոմյերիտական անդա-
մատոմսը ե անձնական քարտը ներկայաց-
նելու դեպքում, վորի մեջ պետք ե նշում
լինի հաշվառումից դուրս դալու վերաբե-
րյալ:

5. Կոմյերիտական կազմակերպություն-
ները պետք ե հսկողություն սահմանեն

կոմյերիտիտիտյան անդամների ու թեկնա-
ծուների կողմից անդամավճարները ժամա-
նակին մուծելու նկատմամբ, յուրաքանչյուր
առանձին դեպքում պարզեն անդամավճարը
ժամանակին չմուծելու պատճառները:

Կոմյերիտիտիտյան՝ յերեք ամիս անդա-
մավճար չմուծած անդամների ու թեկնա-
ծուների՝ ՀամԼԿՅՅՄ-ի շարքերում մնալու
հարցը ըննության ե դրվում սկզբնական
կազմակերպության Ժողովում:

6. Կոմյերիտական կազմակերպություն-
ները պետք ե մաքրեն իրենց շարքերը թըշ-
նամական տարրերից, յերկերեսանիններից,
կոմյերիտիտիտյան յերկաթե կարդապա-
հությունը խախտողներից, բարոյապես
քայքայվածներից, մորթապաշտներից, կար-
յերիտներից:

7. Կոմյերիտիտիտյան հետացնելու
հարցը լուծվում ե կոմյերիտիտիտյան այն
սկզբնական կազմակերպության ընդհանուր
Ժողովում, վորի անդամը կամ թեկնածուն
ե հանդիսանում տվյալ անձնավորությունը,

և հաստատվում ե կոմյերիտմիության շըրջ-
կումի կամ քաղկոմի բյուրոյի կողմից:

8. ՀամԼԿՅԵՄ-ի անդամության թեկնա-
ծուները յենթարկվում են միության բոլոր
վորոչումներին և կատարում են իրենց վրա
գրված բոլոր պարտականությունները:

Թեկնածուները ժողովներին մասնակցում
են խորհրդակցական ճայնի իրավունքով,
բայց չեն կարող ընտրել կամ ընտրվել
միության ղեկավար մարմիններում:

ՀամԼԿՅԵՄ-ի անդամության թեկնածու-
ներն անդամավճար են մուծում Համ.
ԼԿՅԵՄ-ի անդամներին համահալասար:

II

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

9. Կոմյերիտմիության կազմակերպական
կառուցվածքի ղեկավար յկզուռնքն և ղե-
մոկրատական ցենտրալիզմը, վորը նշանա-
կում ե՝

ա) կոմյերիտմիության բոլոր ղեկավար

մարմինների ընտրականություն՝ վերևից
մինչև ներքև.

բ) կոմյերիտական մարմինների պարբե-
րական հաշվետվությունն իրենց կոմյերի-
տական կազմակերպությունների առաջ.

գ) կոմյերիտական խիստ կարգապահու-
թյուն և փոքրամասնության յենթարկումը
մեծամասնությանը.

դ) կոմյերիտական վերադաս մարմինների
վորոչումների անվերապահորեն պարտադիր
լինելը ստորին մարմինների և կոմյերիտ-
միության բոլոր անդամների համար:

10. Կոմյերիտմիությունը կառուցվում ե
ղեմոկրատական ցենտրալիզմի հիմունք-
ների վրա ըստ տերիտորիալ-արտադրական
հատկանիշի՝ կոմիտեն (տերիտորիալ կազ-
մակերպության) բարձրագույն մարմինն ե
այդ շըջանի մեջ մտնող բոլոր (տերիտո-
րիալ) կազմակերպությունների համար.
արտադրության կամ կառավարման մի ամ-
բողջ ճյուղին սպասարկող (տրանսպորտ,
քաղաքացիական ավիացիա և այլն) կազմա-
կերպությունները բարձրագույն են հանդի-

սանում տվյալ ճյուղի կոմյերիտմիության բոլոր կազմակերպությունների նկատմամբ:

11. Կոմյերիտմիության կազմակերպական սխեման հետևյալն է.

ա) ԽՍՀՄ տերիտորիա—Համամիութենական Համագումար—ՀամԼԿՅՅՄ-ի Կենտկոմ.

բ) մարզեր, յերկրամասեր և հանրապետություններ—մարզային, յերկրային կոնֆերենցիաներ, ազգային հանրապետությունների կոմյերիտմիության համագումարներ—մարզկոմներ, յերկրկոմներ, ազգային հանրապետությունների կոմյերիտմիության կենտկոմներ.

գ) քաղաքներ, շրջաններ—քաղաքային, շրջանային կոնֆերենցիաներ—քաղաքային, շրջանային կոմիտեներ,

դ) ձեռնարկություններ, գյուղեր, կոլտնտեսություններ, մեքենա-տրակտորային կայաններ, կարմիր-բանակային զորամասեր, հիմնարկություններ, գաղութներ—ընդհանուր ժողովներ—կոմյերիտական կոմիտեներ (գործարանի կոմյերիտմիության

կոմիտե, ֆաբրիկային կոմյերիտմիության կոմիտե, բարձրագույն ուսումնական հաստատություն կոմյերիտմիության կոմիտե և այլն):

12. Բարձրագույն ինստանցիայից դեպի ստորինը յենթարկման և հաշվետվության կարգը հետևյալն է՝ Համամիութենական Համագումար — ՀամԼԿՅՅՄ-ի Կենտկոմ, մարզային, յերկրային կոնֆերենցիա, ազգային հանրապետություն կոմյերիտմիության համագումար—մարզկոմ, յերկրկոմ, ազգային հանրապետություն կոմյերիտմիության Կենտկոմ. քաղաքային, շրջանային կոնֆերենցիա — քաղաքային, շրջանային կոմիտե և այլն:

13. Կոմյերիտմիության յուրաքանչյուր շրջանային ու վերադաս կոմիտե ունի իր կնիքը՝ ՀամԼԿՅՅՄ-ի Կենտկոմի սահմանած ձևով:

14. Յերիտասարդության զանազան խմբերի մեջ դաստիարակչական աշխատանք կազմակերպելու համար կոմյերիտմիության շրջկոմներում, քաղկոմներում, մարզ-

կոմիտեներում, յերկրկոմներում ու ազգային հանրապետությունների կենտկոմներում ստեղծվում են ՀամԼԿՅՆՄ-ի Կենտկոմի սահմանած համապատասխան բաժիններ ու սեկտորներ:

ՀամԼԿՅՆՄ-ի Կենտկոմում ստեղծվում են բաժիններ, սեկտորներ և բաժիններից կից խորհուրդներ՝ ՀամԼԿՅՆՄ-ի Կենտկոմի հայեցողությամբ:

15. Կոմյերիտական կազմակերպությունները դպրոցներում ստեղծում են պատանի պիոներների՝ Վ. Ի. Լենինի անվան մանկական կոմունիստական կազմակերպություններ, իսկ բնակավարձկույներում՝ պիոներական Ֆորպոստներ, վորոնք աշխատում են կոմյերիտմիության անմիջական ղեկավարությամբ:

Մանկական կոմունիստական կազմակերպությունների աշխատանքը գործնականորեն ղեկավարելու համար կոմյերիտմիության շրջկոմներում, քաղկոմներում, մարզկոմներում, յերկրկոմներում և ազգային հանրապետությունների կենտկոմներում

ստեղծվում են պիոներների բաժիններ, իսկ կոմյերիտմիության սկզբնական կազմակերպությունների կոմիտեները պատանի պիոներների ջոկատներն ու Ֆորպոստները ղեկավարելու համար ղեկավարներ են առանձնացնում լավագույն, զբաղեւտ և հեղինակավոր կոմյերիտականներից:

Կոմյերիտական կազմակերպությունները ջոկատավարներին ոգնում են մանկական ու պիոներական զանազան խմբակների համար ղեկավարներ ընտրելու գործում:

Կոմյերիտական կազմակերպությունները պետք է ամենորյա հոգատարություն ունենան պիոներական ջոկատների և Ֆորպոստների աշխատանքի նկատմամբ, պրոֆմիությունների և ժողովրդական լուսավորության մարմինների հետ միասին կազմակերպական-նյութական բազա ապահովելով պիոներական ճամբարների, ակումբների, սպորտ-հրապարակների, թատրոնների, մանկական, տեխնիկական ու տուրիստական կայանների և այլնի աշխատանքի համար:

ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմը, կոմյերիտ-
միության մարզկոմները, յերկրկոմները և
ազգային հանրապետությունների կենտկոմ-
ները հրատարակում են պիտներական թեր-
թեր, ժուռնալներ և մանուկների համար
անհրաժեշտ զրականություններ:

III

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

16. Կոմյերիտմիության բարձրագույն
որդանն է համամիութենական համագու-
մարը:

Հերթական համագումարները հրավիր-
վում են առնվազն յերեք տարին մեկ ան-
գամ:

Արտակարգ համագումարներ հրավիր-
վում են ՀամԼԿՅԵՄ-ի Կենտրոնական Կոմի-
տեյի կողմից՝ իր սեփական նախաձեռնու-
թյամբ կամ կոմյերիտմիության վերջին
համագումարում ներկայացված անդամների
ընդհանուր թվի առնվազն մեկ յերրորդի
պահանջով:

Համամիութենական համագումարի հրա-
վիրումը և նրա որակարգը հայտարարվում
են վոչ ուշ քան համագումարը հրավիրե-
լուց մեկ և կես ամիս առաջ:

Արտակարգ համագումարները հրավիր-
վում են յերկու ամսվա ընթացքում:

Համամիութենական համագումարի ներ-
կայացուցչության նորման սահմանում է
կոմյերիտմիության Կենտրոնական Կոմի-
տեն:

17. Այն դեպքում, յեթե ՀամԼԿՅԵՄ-ի
Կենտրոնական Կոմիտեն 16-րդ կետում
մատնանշված ժամկետում արտակարգ հա-
մագումար չի հրավիրում, այն կազմակեր-
պությունները, վորոնք պահանջել են ար-
տակարգ համագումար հրավիրել, իրա-
վունք ունեն ստեղծելու արտակարգ համա-
գումար հրավիրող կազմակերպական էո-
միտե, վորն ոգտվում է Կենտրոնական Կո-
միտեյի իրավունքներով:

18. Համագումարը—

ա) լսում ու հաստատում է Կենտկոմի

ու կենտրոնական վերստուգիչ Հանձնաժողովի հաշվետվութունները.

բ) վերանայում և փոփոխության և յենթարկում ՀամԼԿՅՅՄ-ի ծրագիրն ու կանոնադրությունը.

գ) նշում և կոմյերիտմիության աշխատանքի ընդհանուր դիժը և միության հերթական խնդիրները.

դ) ընտրում և ՀամԼԿՅՅՄ-ի կենտրոնական Կոմիտե և կենտրոնական վերստուգիչ Հանձնաժողով:

19. ՀամԼԿՅՅՄ-ի կենտրոնական Կոմիտեն և կենտրոնական վերստուգիչ Հանձնաժողովն ընտրվում են համադրամարի հաստատած կազմով: Կենտրոնական Կոմիտեյի անդամների հեռանալու դեպքում Կոմիտեյի կազմը լրացվում և համադրամարի ընտրած թեկնածուների թվից, համադրամարի սահմանած կարգով:

20. Համամիութենական համադրամարներին միջև ընկած ժամանակամիջոցում միության բարձրագույն օրդանն և հանդի-

սանում ՀամԼԿՅՅՄ-ի կենտրոնական Կոմիտեն:

Կենտկոմը ղեկավարում և կոմյերիտմիության ամբողջ աշխատանքը, ներկայացնում ՀամԼԿՅՅՄ-ը պետական հիմնարկներում ու կազմակերպություններում, նշանակում և միության կենտրոնական օրդան «Կոմսոմոլսկայա Պրավդա»-յի խմբագրությունը և ՀամԼԿՅՅՄ-ի կենտկոմի մյուս հրատարակությունների խմբագրությունները, բաշխում և միության ուժերն ու միջոցները և վերահսկում նրանց:

21. ՀամԼԿՅՅՄ-ի կենտրոնական Կոմիտեյի պլենումները հրավիրվում են առնվազն չորս ամիսը մեկ անգամ:

Կենտկոմի անդամության թեկնածուները կենտկոմի պլենումի նիստերին մասնակցում են խորհրդակցական ճաշի իրավունքով:

22. Կոմյերիտմիության կենտկոմի պլենումը, կենտկոմի պլենումների միջև ընկած ժամանակամիջոցում միության ամբողջ աշխատանքը ղեկավարելու համար,

իր կազմից ընտրում ե կենտկոմի Բյուրոն և կազմակերպական-գործադիր բնույթի ընթացիկ աշխատանքների համար—քարտուղարութիւն՝ կենտկոմի կողմից վորոշված կազմով։ Կոմյերիտմիութեան կենտկոմը կանոնավոր կերպով ինֆորմացիա յե տալիս կոմյերիտական կազմակերպութիւններին՝ իր աշխատանքի մասին։

23. Հետ մնացող առանձին բնագավառներում կոմյերիտական աշխատանքն ուժեղացնելու նպատակով ՀամԼԿՅԵՄ-ի կենտրոնական Կոմիտեն նշանակում ե կոմյերիտական կազմակերպիչներ, վորոնք աշխատում են նրա անմիջական ղեկավարութեամբ ու վերահսկողութեամբ։

24. Այնտեղ, վորտեղ կան քաղաքական բաժիններ (խորհրդատեսութիւններ, ջրային և յերկաթուղային տրանսպորտ, Հյուսիսային Ծովային ճանապարհ և այլն), կոմյերիտական կազմակերպութիւնների աշխատանքը ղեկավարում են քաղբաժինների պետերի՝ կոմյերիտական աշխատանքի գծով

ողնականները, վորոնց ընտրում և հաստատում ե ՀամԼԿՅԵՄ-ի կենտկոմը։

Քաղբաժինների պետերի՝ կոմյերիտմիութեան գծով ողնականներն անմիջականորեն յենթարկվում են ՀամԼԿՅԵՄ-ի կենտկոմին և ղեկավարվում են քաղբաժինների ու քաղվարչութիւնների համապատասխան պետերի կողմից։

25. Կենտրոնական վերստուգիչ Հանձնաժողովն ստուգման ե յենթարկում՝

ա) գործերը վարելու արագութիւնն ու ճշտութիւնը կոմյերիտմիութեան կենտրոնական մարմիններում և ՀամԼԿՅԵՄ-ի կենտկոմի ապարատի կանոնավորութիւնը։

բ) ՀամԼԿՅԵՄ-ի կենտկոմի գրամարկղը և բյուջեյի կատարումը։

26. ՀամԼԿՅԵՄ-ի կենտկոմում ստեղծվում ե կոմյերիտմիութեան մեջ ընդունող և կոմյերիտմիութիւնից հեռացնող հանձնաժողով, վորն աշխատում ե ՀամԼԿՅԵՄ-ի կենտկոմի ղեկավարութեամբ, զբաղվում ե կոմյերիտմիութեան մեջ ընդունելու, կոմյերիտմիութիւնից հեռացնելու հարցե-

ըի և միութենական տույժի յենթարկելու
վերաբերյալ ներկայացված բողոքների ջըն-
նարկմամբ:

IV

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ,
ՄԱՐԶԱՅԻՆ ՈՒ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

27. Մարզային, յերկրային, հանրապե-
տական կոմյերիտական կազմակերպության
բարձրագույն որդանն և կոմյերիտմիու-
թյան մարզային, յերկրային կոնֆերենցիան
կամ ազգային հանրապետության կոմյե-
րիտմիության համադուժարը, իսկ դրանց
միջև ընկած ժամանակամիջոցում՝ մարզա-
յին, յերկրային կոմիտեն, ազգային հան-
րապետության ԼԿՅԵՄ Կենտկոմը:

Իրենց ղերծունեյության բնադաժառում
նրանք ղեկավարվում են Լենինյան Կոմու-
նիստական Յերիտասարդական Միության
համամիութենական համադուժարների և
ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի վերոշումներով:

Կոմյերիտմիության մարդկումները,

յերկրկումները, ազգային հանրապետու-
թյաններ ԼԿՅԵՄ Կենտկոմները հաշվետու
յեն ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի առաջ, Համ-
ԼԿՅԵՄ-ի Կենտկոմի սահմանած կարգով:

28. Հերթական մարզային, յերկրային
կոնֆերենցիա կամ ազգային հանրապետու-
թյան ԼԿՅԵՄ համադուժար հրավիրում են
մարզային, յերկրային կոմիտեն, ազգային
հանրապետության ԼԿՅԵՄ Կենտկոմը մեկ
և կես տարին մեկ անգամ, իսկ արտակարգ
կոնֆերենցիա կամ համադուժար հրավիր-
վում և կոմյերիտմիության մարզային,
յերկրային կոմիտեի, ազգային հանրապե-
տության ԼԿՅԵՄ Կենտկոմի վերոշմամբ,
կամ տվյալ մարդի, յերկրամասի, հանրա-
պետության կազմակերպության անդամնե-
րի ընդհանուր թվի առնվազն մեկ յերրոր-
դի սլահանջով:

Կոմյերիտմիության մարզային, յեր-
կրային կոնֆերենցիայի, ազգային հան-
րապետության ԼԿՅԵՄ համադուժարի ներ-
կայացուցչության նորման սահմանում
են ԼԿՅԵՄ մարզային, յերկրային կոմիտե-

ները, աղղային հանրապետութեան կենտ-
կոմը:

Մարզային, յերկրային կոնֆերենցիան,
աղղային հանրապետութեան ԼԿՅՆՄ համա-
գումարը լսում և քննարկում է Համ.
ԼԿՅՆՄ-ի աշխատանքի ընդհանուր հարցե-
րը, լսում և հաստատում է մարզային,
յերկրային կոմիտեի, աղղային հանրապե-
տութեան ԼԿՅՆՄ կենտկոմի և Վերստու-
գիչ Հանձնաժողովի հաշվետու զեկուցում-
ները, քննութեան է տուում մարզում,
յերկրամասում, հանրապետութեան մեջ կա-
տարվելիք կոմյերիտական աշխատանքի
հարցերը և ընտրում է մարզային, յերկրա-
յին կոմիտե, ԼԿՅՆՄ կենտկոմ, Վերստու-
գիչ Հանձնաժողով և կոմյերիտութեան
համամիութենական համագումարի պատ-
գամավորներ:

29. Մարզային, յերկրային կոմիտեն,
աղղային հանրապետութեան ԼԿՅՆՄ կենտ-
կոմը նշանակում է իր վերահսկողութեան
տակ աշխատող կոմյերիտական որդանների
խմբադրութեանները, ղեկավարում է ստու-

րագաս կազմակերպութեաններին աշխատան-
քը, կոմյերիտութեանը ներկայացնում է
կուսակցական, խորհրդային, պրոֆմիութե-
նական ու այլ կազմակերպութեաննե-
րում, ինֆորմացիա յետախ յերկրամա-
սի, մարզի, հանրապետութեան կոմյերի-
տական կազմակերպութեանն իր աշխատան-
քի մասին, իր կազմակերպութեան սահման-
ներում բաշխում է կոմյերիտութեան ու-
ժերն ու միջոցները:

30. Մարզային, յերկրային կոմիտեի,
աղղային հանրապետութեան ԼԿՅՆՄ կենտ-
կոմի պլենում հրավիրվում է տուվազն յե-
րեք ամիսը մեկ անգամ:

31. Մարզային, յերկրային կոմիտեն,
աղղային հանրապետութեան ԼԿՅՆՄ կենտ-
կոմը ընթացիկ աշխատանքի համար ընտ-
րում է բյուրո:

ԼԿՅՆՄ մարզկոմների, յերկրկոմների
և աղղային հանրապետութեաններին կենտ-
կոմների քարտուղարներին համար պարտա-
դիր է հետևյալ կուսակցական և կոմյերի-
տական ստաթը՝

Բանվորների համար՝ ՀամԼԿՅՅՄ-ի ստաժ—5 տարվա և ՀամԿ(բ)Կ ստաժ—4 տարվա,

մյուսների համար՝ ՀամԼԿՅՅՄ-ի ստաժ—6 տարվա և ՀամԿ(բ)Կ ստաժ—5 տարվա:

Շանքուքյուն.— Յերկրամասերի ու հանրապետութունների մեջ մտնող ԼԿՅՅՄ մարզկոմների, ազգային հանրապետութունների կենտկոմների քարտուղարների համար պարտադիր և հետևյալ կուսակցական ու կոմյերիտական ստաժը՝

բանվորների համար՝ ՀամԼԿՅՅՄ-ի ստաժ—4 տարվա և ՀամԿ(բ)Կ ստաժ—3 տարվա,

մյուսների համար՝ ՀամԼԿՅՅՄ-ի ստաժ—5 տարվա և ՀամԿ(բ)Կ ստաժ—4 տարվա:

32. Յերկրամասերի ու հանրապետութունների կազմի մեջ մտնող ազգային և այլ մարզերի ու ինքնավար հանրապետութունների կոմյերիտական կազմակերպութուններն աշխատում են յերկրային կո-

միտեների, ազգային հանրապետութունների ԼԿՅՅՄ կենտկոմների ղեկավարությամբ և իրենց ներքին կյանքում ղեկավարվում են կոմյերիտության յերկրային, մարզային, հանրապետական կազմակերպութունների մասին ՀամԼԿՅՅՄ-ի կանոնադրության 4-րդ գլխում չարադրված դրույթներով:

Վ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՈԿՐՈՒԳԱՅԻՆ,
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

33. Քաղաքային, ոկրուգային, չրջանային կոմյերիտական կոնֆերենցիա հրավիրվում է կոմյերիտության քաղաքային, ոկրուգային, չրջանային կոմիտեյի կողմից առնվազն մեկ և կես տարին մեկ անգամ. արտակարգ կոնֆերենցիա հրավիրվում է քաղաքային, ոկրուգային, չրջանային կոմիտեյի վորոշմամբ կամ քաղաքային, ոկրուգային, չրջանային կազմակերպության մեջ մտնող կազմակերպութուն-

ների անդամները ընդհանուր թվի առնը-
վազն մեկ յերրորդի պահանջով:

Քաղաքային, ոկրուգային, շրջանային
կոնֆերենցիան լուծւմ և հաստատում է քա-
ղաքային, ոկրուգային, շրջանային կոմի-
տեյի, վերստուգիչ հանձնաժողովի հաշվե-
տվությունները, ընտրում է քաղաքային,
ոկրուգային, շրջանային կոմիտե, վերստու-
գիչ հանձնաժողով և կոմյերիտմիության
յերկրային, մարզային կոնֆերենցիայի կամ
ազգային հանրապետության համագումարի
պատգամավորներ:

34. Կոմյերիտմիության քաղաքային ու
ոկրուգային կոմիտեների քարտուղարների
համար պարտադիր է կուսակցական ու
կոմյերիտական հետևյալ ստաժը՝

բանվորների համար՝ ՀամԼԿՅՅՄ-ի
ստաժ—4 տարվա և ՀամԿ(բ)Կ ստաժ—2
տարվա,

մյուսների համար՝ ՀամԼԿՅՅՄ-ի
ստաժ—5 տարվա և ՀամԿ(բ)Կ ստաժ—3
տարվա.

կոմյերիտմիության շրջանային կոմի-

տեները քարտուղարների համար՝ բանվոր-
ների համար՝ ՀամԼԿՅՅՄ-ի ստաժ—3 տար-
վա և ՀամԿ(բ)Կ ստաժ—2 տարվա, մյուս-
ների համար՝ ՀամԼԿՅՅՄ-ի ստաժ—4 տար-
վա և ՀամԿ(բ)Կ ստաժ—2 տարվա:

Քաղաքային, ոկրուգային ու շրջանա-
յին կոմիտեների քարտուղարներին հաստա-
տում են մարզկոմը, յերկրկոմը կամ ազգա-
յին հանրապետության ԼԿՅՅՄ Կենտկոմը՝
ՀամԼԿՅՅՄ-ի Կենտկոմի հետագա հաս-
տատմամբ:

35. Կոմյերիտմիության քաղաքային,
ոկրուգային, շրջանային կոմիտեներն ընտրում
է բյուրո, կազմակերպում և հաստատում
է ձեռնարկություններում, խորհտնտեսու-
թյուններում, մեքենա-տրակտորային կա-
յաններում, կոլտնտեսություններում ու
գյուղացիներում կոմյերիտական սկզբնական
կազմակերպություններ, ղեկավարում է
քաղաքի կամ շրջանի բոլոր սկզբնական
կազմակերպությունների աշխատանքը, կա-
տարում է կոմյերիտականների հաշվառում,
քաղաքի ու շրջանի սահմաններում բաշխում

ե կոմյերիտական կազմակերպության ու-
ժերն ու միջոցները, խորհրդային, տնտե-
սական ու արհեստակցական կազմակերպու-
թյուններում հանդես ե գալիս վերջինս կոմ-
յերիտմիության ներկայացուցիչ:

Կոմյերիտմիության քաղաքային, ոկ-
րուղային, չրջանային կոմիտեն իր գործու-
նեցության մասին հաշվետվություններ և
ներկայացնում մարդային, յերկրային կոմի-
տեյին, աղղային հանրապետության ԼԿՅԵՄ
Կենտկոմին ըստ ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի
սահմանած ժամկետների ու ձևի:

Քաղաքային, ոկրուղային, չրջանային
կոմիտեյի պլենումը հրապիրվում է առնը-
վազն յերկու ամիսը մեկ անգամ:

VI

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

36. Կոմյերիտմիության հիմքը կոմյե-
րիտական սկզբնական կազմակերպություն-
ներն են:

Կոմյերիտական սկզբնական կազմակեր-
պություններ ստեղծվում են Փարիկա-
ներում, գործարաններում, մեքենա-տրակ-
տորային կայաններում, խորհտնտեսու-
թյուններում և այլ տնտեսական ձեռնար-
կություններում, կոլտնտեսություններում,
գյուղերում, հիմնարկություններում,
բարձրագույն ուսումնական հաստատու-
թյուններում, դպրոցներում, կարմիր-բա-
նակային դորամասերում և այլն, կոմյե-
րիտմիության առնվազն յերեք անգամի առ-
կայության դեպքում:

Կոմյերիտական սկզբնական կազմակեր-
պությունները հաստատվում են ՀամԼԿՅԵ
Միության չրջանային կամ քաղաքային կո-
միտեյի կողմից:

37. Խոշոր ձեռնարկություններում,
հիմնարկություններում, բարձրագույն ու-
սումնական հաստատություններում, դըպ-
րոցներում, կոլտնտեսություններում և
այլն, վերտեղ 100 և ավելի կոմյերիտակա-

ներ կան, ամբողջ ձեռնարկությունը, հիմնարկը և այլն ընդգրկող կոմյերիտական սկզբնական կազմակերպության ներսում (յուրաքանչյուր առանձին դեպքում շրջկոմի, քաղկոմի հաստատությամբ) կարող են կազմակերպվել ցեխային, տեղամասային, բաժնի, Ֆակուլտետային և այլ կոմյերիտական կազմակերպություններ: Ցեխային, տեղամասային և այլ կազմակերպությունների ներսում, իր հերթին, կարող են ստեղծվել կոմյերիտական խմբակներ:

38. Ընթացիկ աշխատանքները կատարելու համար կոմյերիտական սկզբնական կազմակերպությունն ընտրում է կոմյերիտական կոմիտե (կոմյերիտմիության գործարանային կոմիտե, Փարկոմ և այլն) մեկ տարի ժամանակով, իսկ ցեխային կազմակերպությունը — ցեխային կոմյերիտական կազմակերպության բյուրո կամ կոմյերիտական կազմակերպիչ՝ վեց ամիս ժամանակով:

Կոմյերիտմիության 10 անդամից պա-

կաս ունեցող սկզբնական կոմյերիտական կազմակերպություններում կոմյերիտական կոմիտեներ չեն ստեղծվում, այլ ընտրվում է կոմյերիտմիության սկզբնական կազմակերպության քարտուղար:

Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի կոմյերիտական սկզբնական կազմակերպություններում ընտրվում է վոչ թե կոմիտե, այլ բյուրո:

Կոմյերիտական սկզբնական կազմակերպություններում, իրեն կանոն, աշխատանքը կատարում են արտադրությունից չազատված աշխատողները: Ազատված աշխատողներ կարող են առանձնացվել միայն սկզբնական կազմակերպությունների առավել խոշոր կոմիտեներում՝ ՀամԿՅՅ Միության Կենտկոմի թույլտվությամբ:

39. Տեղական պրոֆմիութենական և այլ հասարակական կազմակերպությունների հետ կապ պահպանելու համար կոմյերիտական սկզբնական կազմակերպությունն ստանձնացնում է իր ներկայացուցիչներին:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

40. Կարմիր բանակում ՀամԼԿՅԵՄ-ի կազմակերպությունների կատարած ամբողջ աշխատանքը կուսակցական-քաղաքական աշխատանքի անբաժանելի մասն է և կատարվում է Կարմիր բանակի զորամասերի քաղորդանքների, ղինվորական կոմիսարների ու կուսակցական կազմակերպությունների անմիջական ղեկավարությամբ:

Կոմյերիտմիության ղեկավար մարմիններին (չրջկոմ, քաղկոմ, մարդկոմ) և Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի քաղորդանքների փոխհարաբերությունը վորոշվում է ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի և Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի Քաղվարչության մշակած հատուկ կանոնադրությամբ:

41. Կարմիր բանակի կոմյերիտական կազմակերպությունների իրավունքները, պարտականություններն ու աշխատանքը

վորոշվում են ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմի և Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի Քաղվարչության մշակած հատուկ կանոնադրությամբ:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒ-
ԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԻ

42. Լենինյան կոմյերիտմիությունն իր ամբողջ աշխատանքը կատարում է Համ. Կ(բ)Կ անմիջական ղեկավարությամբ: ՀամԼԿՅԵՄ-ի Կենտկոմը, հանդիսանալով միության ղեկավար որդանը, անմիջականորեն յենթարկվում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմին: ՀամԼԿՅԵՄ-ի տեղական կազմակերպությունների աշխատանքին ուղղվելու են տալիս և վերահսկողության են յենթարկում համապատասխան մարզային, յերկրային, հանրապետական, քաղաքային ու շրջանային կուսակցական կազմակերպությունները:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ
ՊՐՈՓՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

43. Համատեղ աշխատանք կատարելու համար ՀամԼԿՅՆՄ-ի կազմակերպություններն իրենց ներկայացուցիչներն են առանձնացնում պրոֆմիուլթյունների մեջ, ժողովրդական կրթության մարմիններում և յերիտասարդության չահերի հետ կապված աշխատանք կատարող այլ հիմնարկություններում:

44. Կոմյերիտմիության ներկայացուցիչները պրոֆմիուլթյուններում, խորհրդային և այլ կազմակերպություններում կենսագործում են կուսակցության, կոմյերիտմիության վորոշումները, հետևում են յերիտասարդությանը վերաբերող կառավարական օրենքների կատարմանը, մասնակցում են համապատասխան կազմակերպությունների ընդհանուր աշխատանքին և իրենց աշխատանքի մասին պարբերաբար հա-

շիվ են տալիս իրենց ուղարկող կոմյերիտական կազմակերպություններին:

ՆԵՐՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՅԵՎ
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

45. Իր կազմակերպության կամ ամբողջ կոմյերիտմիության աշխատանքի բոլոր հարցերի ազատ ու դործնական զըննարկումը ՀամԼԿՅՆՄ-ի յուրաքանչյուր անդամի անկապելի իրավունքն է:

Ինքնաքննադատությունը կոմյերիտմիության ամբողջ աշխատանքում պետք է ծավալվի առանց անձնավորությունը նկատի առնելու, վորպեսզի կոմյերիտմիության անդամները քննադատեն իրենց ընտրովի օրդանների աշխատանքը, իրենց ղեկավարներին, ղեկավարությունից հեռացնելով անուղղելի չաղակերպատներին և հապարակ ու դործնական աշխատանքից խուսափող մարդկանց:

Կոմյերիտական կազմակերպություններ-

րի աշխատանքի հարցերի ազատ ու գործ-
նական քննարկումը պետք է ուղղված լինի
կուսակցութեան վերոշումների ե՛լ ավելի
լավ իրականացման, կոմյեքիտմիութեանը
կուսակցութեան շուրջն ե՛լ ավելի համա-
խմբելու նպատակին: Սակայն միութենա-
կան կյանքի բոլոր վիճելի հարցերի քնն-
նարկումն ազատ է միայն մինչև կազմա-
կերպութեան կողմից համապատասխան վո-
րոշում ընդունելը:

46. Կոմյեքիտական կարգապահութեան
ամենախիստ պահպանումը կոմյեքիտմիու-
թեան բոլոր անդամների ու բոլոր կոմյե-
քիտական կազմակերպութեաններին ամենա-
առաջնակարգ պարտականութեանն է:

Յուրաքանչյուր կոմյեքիտական կազ-
մակերպութեան, յուրաքանչյուր կոմյեքի-
տական, առավել ևս միութեան ակտիվ աշ-
խատող, պետք է ճշգրիտ կերպով, արագո-
րեն ու անթերի կատարեն կուսակցական
ու կոմյեքիտական մարմինների վերոշում-
ները: Կոմյեքիտականները պարտավոր են
որինակելիորեն կատարել խորհրդային կա-

ռավարութեան վերոշումները և նրա բոլոր
մարմինների ցուցումները:

Կոմյեքիտմիութեան ղեկավար մարմին-
ների անդամները պետք է յերկաթե կար-
գապահութեան որինակ ցույց տան կոմյե-
քիտմիութեան մեջ և աջալուրջ պահպանեն
միութեան համախմբվածութեանն ու միաս-
նութեանը: Ղեկավար կոմյեքիտական
մարմինների այն անդամների նկատմամբ,
ովքեր կխախտեն այս պահանջը, պետք է
կիրառվեն միութենական տույժի բոլոր մի-
ջոցները, ընդհուպ մինչև կոմյեքիտմիու-
թեանից վտարելը, իսկ ՀամԼԿՅԵՄ Կենտ-
կոմի անդամների նկատմամբ—վոխադրու-
մը Կենտկոմի թեկնածու, վտարումը Կենտ-
կոմի կազմից և իբրև ծայրահեղ միջոց՝
վտարումը կոմյեքիտմիութեանից: Այսպի-
սի տույժերի կարող է յենթարկել միայն
այն կոմիտեյի պլենումը, վորի անդամն է
հանդիսանում միութեան կարգապահու-
թեանը խախտողը, կամ կոմյեքիտմիու-
թեան վերադաս կոմիտեն:

47. Վերադաս կազմակերպութեանների

վորոշումները չկատարելու և այլ զան-
ցանքների հետևանքը կարող են հանդիսա-
նալ՝ կազմակերպությունների համար —
պարսավանք և ընդհանուր վերացուցակա-
գրում (կազմակերպություն ցրում)՝
ԼԿՅՅՄ-ի մարզկոմի, յերկրկոմի, ազգային
հանրապետության Կենտկոմի սանկցիա-
յով. կոմյերիտիության առաջնին ան-
դամների համար — պարսավանքի այս կամ
այն տեսակը (հանդիմանություն, նկատո-
ղություն և այլն), հստակապահան պարսա-
վանք, ղեկավար կոմյերիտական աշխա-
տանքից ժամանակավորապես հեռացնելը.
համապատասխան կուսակցական, խորհրդ-
ային ու այլ կազմակերպությունների
առաջ՝ այդ կազմակերպություններում կա-
տարած պատասխանատու աշխատանքից հե-
ռացնելու մասին հարց դնելը. կոմյերիտ-
միությունից վտարելը. կոմյերիտմիու-
թյունից վտարելը՝ զանցառություն մասին
վարչական ու դատական իշխանություննե-
րին հայտնելով:

Ծանոթություն. — ՀամԼԿՅՅՄ-ի այն

անդամները, վորոնք միևնույն ժամա-
նակ ՀամԿ(բ)Կ անդամ կամ թեկնածու
յեն, կատարած զանցառություն համար
պատասխանատու յեն ինչպես կուսակ-
ցական, այնպես ել կոմյերիտական
կազմակերպությունների առաջ:

XI

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

48. Կոմյերիտմիության դրամական մի-
ջոցները կազմվում են անդամավճարներից
և այլ մուտքերից:

Ծանոթություն. — ՀամԼԿՅՅՄ-ի այն
անդամները, վորոնք միևնույն ժամա-
նակ ՀամԿ(բ)Կ անդամներ կամ թեկնա-
ծուներ են, կոմյերիտմիության մեջ
անդամավճար մուծելուց ազատվում
են:

49. ՀամԼԿՅՅՄ-ի բոլոր անդամներն ու
թեկնածուները (այդ թվում նաև Համ.
Կ(բ)Կ մեջ յեղածները) ամեն տարի վճա-

րում են ռազմա-չեֆական անդամավճար և
ինտերնացիոնալ անդամավճար՝ ՀամԼԿՅՆ
Միության Կենտկոմի սահմանած չափով:

50. Կոմյերիտմիության թեկնածու կամ
անդամ ընդունելու ժամանակ մուտքի վճար
գանձվում է անդամավճարի ամսական դու-
մարի կրկնակի չափով:




Թարգմ. Հ. Թուրշյան
Խմբագիր Ս. Միքայելյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբադրժն Հ. Մանվելյան
Կոնսուլ սրբադրժն Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր № 4—2517
հրատ. № 705, Գառվեր № 134
տիրած 20.000

Հտնձնվել է տպագրության 2/VII 1939 թ.
Մասրադրվել է տպագրելու 15/VII 1939 թ.
Գինը 50 կ. կազմը 30 կ.

Պետհրատ—Փաղաքական գրականության
հրատարակչության տպարան,
Ցեքևան, Սլլանվերդյան № 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0182756

9172 80 ч.

ПРОГРАММА И УСТАВ
ВСЕСОЮЗНОГО ЛЕНИНСКОГО
КОММУНИСТИЧЕСКОГО
СОЮЗА МОЛОДЕЖИ

Армиз — Издательство молит. литературы
Гр. 800, 1939